# ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

Բժշկի ֆելիետոնը.— Ատամների մասին.— Առողջապահական գաստիարակութիւնը.— Ջաքարի հիւանդութիւն.— Կինեմատոգրաֆը վիրաբուժ. մէջ.— Ծխախոտի պատմութիւնը.— Զգացմունքների դոյնը.— Այլ և այլք.— Յայտարարութիւններ։

## ԲԺՇԿԻ ՖԵԼԻԵՏՕՆԸ

— —

### ՓՈՂԻՆ ԵՒ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Անցեալ օրը ես ստացայ մի այցետոմս, որով տոմսատէր պարոնը հրաւիրում էր ինձ այցելել իր հիւանդ որդուն. հասցէն նշանակած էր։

Պարոնն ինձ անծանօթ էր. գնացի։ Ջանդը տւեցի, սպասաւորը դուռը բացեց, վերարկուս հանեց. նախասենեակումը կար հայելի, սեղան, սանր և խոզանակ գլխի մազերի համար և այլ բոլոր սարք ու կարգը ըստ օրինի։ Մտայ դահլիճը,— ջահ անդամ կար քաշարած՝ ըստ ամենայնի երևում էր, որ ես գնում եմ հարստի տան մէջ։

Մինչև տան-տիրոջ երևալը՝ ես մօտեցայ բազկաթոռին, որը զետեղած էր մի շքեղ գորգի վրայ և նստեցի. նստելս տեսնեմ,—բազկաթոռից և գորգից բարձրացաւ մի բիւր հազար ձևի ու մեծութեան մանրիկ առարկաներ՝ մազաձև, թոզաձև, գրօներ, մէկեր և քերականական դրեթէ բոլոր նշանները, ոչ ի բաց առեալ և հարցականների։ Յիրաւի, ինչ էին դրանք և ինչո՞ւ ես խանգարեցի նրաց մռայ խաղաղութիւնը։

Յանտիկնօջ, թէ տանուտիրոջ սև բախտից էլ չարաճճի արևն իր շողքը, ընդհակառակն այդ պահուն, գցել էր գորգի ու բազկաթոռի վրայ։ Նայեցի անկիւններին—ոստայնն էր բռնել, նայեցի ծաղիկների տերևներին—փոշին էր պատել։ Այլ ևս կասած չըկար որ. այդ հարստի տունը փոշու մէջ կորած է։

Մի ակնթարթում ես արդէն վճռեցի, թէ ո՛ր պիսի ոմն (կամ ոմանք) է լինելու այն պճնեալ գահլիճի տէրը... և չըսխալւեցի։

Հիւանդը մի երեխայ էր տասը տարեկան, թոքերի բորբոքման տագնապի մէջ։ Մեծ գորգի վրայ, հիւանդի կողքին, խաղում էին ծալապատիկ նստած չիս երեխաները՝ չորս, հինգ հոգի. արևը չէր ուզարկել այստեղ իր շողերը, չըգիտեմ նրանց շարժումներից ինչ ձևի բանկր էին բարձրանում օդի մէջմ բայց որ բարձրանում էին—դա անկասկած է, որովհետև քիթս խտխտաց և փռշտ... մի քանի անդամ այդ բիւր հազարները դուրս շպռտւեցին գլգրուած քթիցս։ Իմ փռշտալուն բոլոր երեխաներն արձագանք տւեցին որը փռշտալով, որը հազալով. մարդ ու կին էլ չուզեցին ձեռնպահ մնալ և նոյնպէս հետևեցին մեր համերգին։ Բայց՝ի հարկէ ամենից ողբևրգական հազը իմ փոքրիկ հիւանդինս էր։

Այլ ևս պետք էր, որ բոլոր այս հազ ու փռշտոցի պատճառը գտնւում էր նոյն իսկ այդ հարուստ կահաւորւած սենեակներում։

—Բժի՛շկ, ինչ բան է՝ տարին տարեկան հազը մեր տանիցը դուրս չի գալիս, մին մէկը, մին միւսը միշտ հազում են. այս երեխան էլ վազուց է, որ հապում էր, կամրջովն անցնելուս քամին տւել էր,—հազը սաստկացաւ ու այսպէս հիւանդացաւ։

Հիւանդը չուր ուղեց, մայրիկը գնաց չըրի. մախմուր զգեստի փեշերը, թէ պոչերը մի թզաչափ քաշ էին գալիս յատակին. մայրիկն անցաւ գաւաճան արևի ճառագայթների միջով և ահա ես նորից տեսայ ինձ գահլիճիցն արդէն ծանօթ փոշու ամպերը։

Հետաքրքիր էր այստեղ և ես թօթափել մայրիկի փեշերը և տեսնել, թէ փոշու մանրիկներն ինչ ոլորապտոյտ խաղեր ու հոսանք և ընդհարումներ կըյառաջացնեն արևի շողի մէջ։

Այո՛, ինչ որ տանը կայ—կայ, ինչ որ բերել են այդ տունը բոլոր բնակիչների ,թէ տէր, թէ ծառայի, թէ հիւրերի կօշիկներն ու շորերը, այդ բոլորն էլ այստեղ է. բայց ամենից առատ բերել է մայրիկն իր ծալ-ծալ մախմուր պոչերով՝ խնամքով սրբբելով փողոցի այն շերտերը, որով ինքը ջարեհաճել է անցնել. ի դէպս փողոցային փոշով հիւրասիրելով և այն դժբախտին, որ բախտ է ունեցել տիկնոջ յետևից դնալ բայց խելք չէ ունեցել թաշկինակով ծածկել իր քիթն ու բերանն։ Բայց ինչ է փոշին. այն փոշին, որն այսքան առատութեամբ լցւած է մեր սիրուն քաղաքի փողոցների վրայ։

Ամեն օրգանական մարմին և արտաթորութիւն վերջ ի վերջոյ տարրալուծւում է և փոշու ձև ընդունում, լինի դա թուք, խուխ, գանագան ազ-

բեր աղտեր, մարդկ ու տաւարի մորթու քելւածք, ծաղկի ու կարմրուկի, կամ դիֆտերիտի բշտիկներից, խոցերից առաջացած թեփուկ, թոքախտաւորից բզկտած լորձիւնք, սատկած անասունների լուծւածք և այլն և այլն և այլն. այդ ըոլորը, որոնց մէջ խռնւած են անթիւ, անհամար ախտաբոյծ, մանրիկ մարմիններ-կազմում են մեր փողոցի փոշին և մեր մայրերի, քոյրերի, մեզ այնքան սիրող մեծաւորների հագուստներով, կօշիկներով մեր բնակարանն են բերւում:

Եւ մենք այդ բոլորը շնչառութիւնով անդադար մեր թոքերն ենք մուծանում, բերնով նրանց ընդունում, չեռոյ կուլ տալիս. այդ փոշին նստում է մեր կերակրի վրայ՝ հաց է, պանիր է, կանաչի է և այլն և այլն, ամեն ինչ, ինչ որ մենք անհոգ — անհոգ վայելում ենք...

Եւ չեռոյ զարմանում ենք, երբ մեր տանը մէկն ու մէկը հիւանդանում է. «բժիշկ չան, քեզ մատաղ, որտեղից եկաւ էս անիծած հիւանդութիւնը, երեխին տանիցը ոչ մի տեղ չենք տարել» և այլն:

Այո, անմաքրասիրութիւնն ինքն ըստ ինքեան պարունակում է իր մէջ պատժական մէջոց: Եղէք մաքրասէր և հարիւրից իննսուն հիւանդութեան առաջն արդէն առած կըլինէք: Փոշին բարձրանում է ոչ միայն ձեր հագուստից, այլ և մարմնից. մաքուր պահեցէք ձեր ոչ միայն հագուստը, այլ և մարմինը և երբ ձեղանից ես հրաւէր ստանամ այցելելու ձեր հիւանդ երեխային,— դեռ ձեզ չըտեսած, տեսնելով ձեր տան մաքրութիւնը, ես իսկոյն կըհասկանամ, թէ դուք ով էք և ինչ:

Ի՞նչ անեմ քո հարուստ, շքեղ բնակարանը և կահ-կարասիքը, քո հագուստն, ու թաւշեայ անկողինը, եթէ նրանք փոշով են ծածկւած և փոշու մէջ խեղդւած. ազատեցէք ձեզ փոշո՛ց թէ տանը և թէ դուրսը:

Բժշկապես Բ. Նաւասարդեան:

---

## ԱՏԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա տամնաբոյժ Լ. Պլաւսովի

—

### I

### Ինչո՞ւ համար են մեր ատամները:

Ըոլորն էլ գիտեն, որ ատամները հարկաւոր են ծամելու համար: Բայց թէ ինչու համար մենք պէտք է կերակուրն անպատճառ ծամենք, այդ հասկանալի կըլինի, երբ կարդաք հետևեալ մի քանի տողերը:

Երբ մենք կօշիկներով երկար ճանապարհ ենք գնում, կամ շատ բանեցնում մեր կռնները, տեսնում ենք, որ մեր կօշիկները և մեր հագուստի թևերը մաշւում են:

Իսկ երբ մենք նոյն չափով ման ենք գալիս ոտաբաց, կամ բանում ենք մերկ կռներով, ըստերեւոյթին մեր մարմնի մորթը չի մաշւում, չի ծակւում: Արդիօք այստեղից կարող ենք եզրակացնել, որ մեր մարմնի կաշին իսկապէս չի մաշւում:

Ի հարկէ ոչ, որովհետև, թէ մեր մարմինը և թէ կաշին անընդհատ մաշւում են:

Նա մաշւում է ոչ միայն այն ժամանակ, երբ քսւում է մեր շորերին և ուրիշ առարկաներին, այլ և ըոլորովին անշարժ և հանդիստ դրութեան մէջ եղած միջոցին: Որովհետև նա այդ դրութեան մէջ էլ ըոլորովին անշարժ չէ, ինչպէս մեզ թւում է. նրա սիրտը շարունակ խփում է, նրա թոքերը շընչում են և մարմնի ներսում զանազան գործողութիւններ են կատարւում: Բայց բանը նրանումն է, որ մարմինը իւրաքանչիւր օր որքան կորցնում է, այնքան էլ ստանում է: Ահա թէ ինչու համար առողջ և հասունացած մարդկի միշտ մի և նոյն տեսքն են ունենում, ոչ նւազում են և ոչ էլ նիհարում:

Ուրեմն պէտք է ըլլ այն եղրակացութեան, որ մեր մարմնի զանազան մասերը շարունակ նորոգւում են:

Այն բոլոր նիւթերը, որոնք հարկաւորւում են մարմնի զանազան մասերի նորոգութեան համար, ստացւում են արեան միջոցով. իսկ արիւնն, այդ նիւթերը ստանում է կերակուրներից:

Դրա համար էլ մենք կերակուր ենք ընդունում, որ նա անցնի արեան մէջ, իսկ արիւնը նրան տարածի մեր մարմնի մէջ:

Երեխաների ընդունած կերակուրը, որն արիւն դարձած տարածւում է մարմնի մէջ, բացի նորոգումից, հարկաւորւում է և մարմնի մեծանալու, աճելու համար:

Ըոլորն էլ գիտեն, որ արիւնը հեղուկ է:

Կրնշանակէ մեր կերած կերակուրներն էլ պէտք է հեղուկ լինին, որ կարողանան ընկնել արեան մէջ: Բայց մենք գործ ենք ածում զանազան կարծր կերակուրներ. օր. հաց, միս, կանաչի, աղ, շաքար և այլն:

Այս կերակուրներից մի քանի տեսակները դժւար չէ հեղուկ դարձնել, ինչպէս աղը, շաքարը և այլն: Սրանք ջրում հալւում են. մենք էլ կերակուրների հետ ջուր ենք գործ ածում:

Հացը և միսը ուրիշ են: Եթէ նրանց թողնենք ջրում, միայն ջուրը կըպղտորի: Պղտորած ջուրը, մի քանի րոպէ անշարժ թողնելուց յետոյ, կըպարզի, իսկ

պղտորածը կրնատի ամանի յատակում: Հացը և միսը կըմնան մեւնոյն դրութեան մէջ, մինչդեռ այն բոլորը, ինչ որ պիտի մտնէ արեան մէջ, պէտք է հեղուկ լինի, որ կարողանայ ծծելով նուրբ և բարակ թաղանթի և մաշկի մէջ, խառնել արեան հետ: Այդ տեսակի կարծր կերակուրները հեղուկ դարձնելու համար մարդուս մարմնի մէջ կայ մի տեսակ հիւթ, որը լուծում է ստամոքսի մէջ ընկած կարծր կերակուրները և հեղուկ դարձնում նրանց: Այդ հիւթը կոչւում է մարսողական հիւթ:

Այդ հիւթը պատրաստւում է քիչ-քիչ, բայց անդադար: Մարմնի այն մասերը, որտեղ պատրաստւում է այդ հիւթը, կոչւում են գեղձեր:

Կերակուրն ամենից առաջ բերանն է մտնում: Առաջին մարսողական հիւթը պատրաստւում է թոքաղեղնով, որ գտնւում է բերանի շուրջը, թշերի մէջ և լեզուի տակ: Այդ հիւթը թաւլւում է բերանը փոքրիկ ծակոտիների միջոցով, որոնց նշմարելը դժւար է: Բերանից կերակուրը կուլ է գնում, մտնում ստամոքսն առանձին խողովակով, որ կոչւում է որկոր:

Ստամոքսի մէջ կերակրի վրայ հոսում է ուրիշ հիւթ: Ստամոքսից կերակուրն անցնում է աղիքները: Աղիքներումն էլ կան ուրիշ մարսողական հիւթեր, որոնք նոյնպէս ներգործում են կերակրի վրայ:

Այդ հիւթերը գանազան յատկութիւններ են ունենում: Նրանցից մի տեսակը ներգործում է բուսեղէն կերակուրների վրայ: Օր. հաց, կանաչ, և այլն: Մի ուրիշը կենդանական կերակուրների վրայ — հաց, միս, ձուկ և այլն: Երրորդը ճարպի վրայ:

Այդ հիւթերը մեր կերած կերակուրներն այնպէս են կերպարանափոխում մեր աղիքներում, որ նրանց անկարելի է իրարից դանազանել:

Մեր կերած կերակրների այն բոլոր մասերը, որոնք հարկաւոր են սննդառութեան համար, հեղուկ դարձած, ծծւում են մեր աղիքների պատերից, իսկ այդտեղից հասաքւում արնատար անօթների մէջ և արիւն դարձած տարածւում մեր մարմնի մէջ: Մնացած անպէտք մասերը, անցնելով աղիքների միջով, արտաթորւում են:

Արիւնը հասցնում է մարմնին այն բոլորը, ինչ որ նա կորցնում է իր շարժման միջոցին:

Մեր կերած կերակուրը պէտք է, լաւ ծամելով, բոլորովին մանրացնենք, տրորենք, չեզոյ կուլ տանք, որպէս զի մարսողական հիւթը կարողանայ լաւ ներգործել նրա վրայ և խառնելով հետը հեղուկ դարձնել:

Իսկ կերակուրը ծամելու, մանրացնելու և տրորելու համար հարկաւոր են լաւ ատամներ:

Այժմ իմացաք, թէ ինչու համար են մեզ տւած ատամները:

Նորածին մանուկները, ինչպէս յայտնի է մեզ, ատամներ չեն ունենում: Կարիք էլ չկայ, որովհետև պէտք չունին: Մանուկն առաջին տարին կերակրւում է մօր կաթով, իսկ կաթի մէջ գտնւած բոլոր պիտանի մասերը հեղուկ դրութեան մէջ են լինում:

Մանուկների ատամներն սկսում են դուրս գալ 7-րդ ամսում: Երրորդ տարւայ սկսբում երեխայի բերանում լինում են 20 հատ կաթնատամներ: Այդ հասակից սկսած երեխան կերակրւում է այնպէս, ինչպէս մեծ մարդը:

Կաթնատամները երեխային այնպէս են ծառայում, ինչպէս մշտական ատամները մեծերին:

Երեխայքը պէտք է կերակուրն այնպէս ծամեն որ մարսողական հիւթը կարողանայ լաւ խառնւել կերակրի հետ և հեղուկ դարձնել նրան:

Փաղցած մարդը կերակուրը տեսնելուն և բերանը դնելուն պէս՝ իսկոյն մարսողական հիւթը սկսում է հոսել: Ծամելը հիւթի հոսելը շատացնում է: Ուրեմն որքան շատ ծամել, այնքան շատ հիւթ կը գոյանայ: Առանց ծամելու պատառը շատ դժւար է կուլ գնում: Պատառը ծամելու և բերանում շրջելու միջոցին, թուքը լաւ խառնւում է կերակրի հետ: Բերանի լորձունի շնորհիւ՝ պատառը լպլպում է, հեշտ ու սահուն կուլ գնում: Մինչև անդամ պառաւները, որոնք զուրկ են ատամներից, պատառը իրենց բերանում այս անկիւնից այն անկիւնը տանելով, մի կերպ փափկացնում են, տրորում և կուլ տալիս:

## II

### Ատամների կորցնելը իրենց վնաս է բերում:

Ով որ ատամներ չունի, նա չի կարող ամեն տեսակ կերակուր ուտել, պէտք է փափուկ կերակուրներ ուտի, կամ թէ չէ կարծր կերակուրները մեծ-մեծ կտորներով կուլ տայ: Մեծ-մեծ կտորների վրայ մարսողական հիւթը չի կարող ներգործել, հալցնել ու նրան հեղուկ դարձնել, որ կարողանայ խառնւել արեան հետ:

Լաւ չծամելու պատճառով շատ անդադար կերակուրներ գուր տեղը փչանում կորչում են, չեն կարողանում հեղուկ դառնալ և խառնւել արեան հետ: Սրա հետևանքն այն է լինում, որ մարմինն իր կորցրած մասերը լիովին չեզ սառնալ չի կարողանում:

Բացի սրանից՝ մեծ մեծ կտորները երկար մնալով ստամոքսում և աղիքներում, այնտեղ նեխւում են և փչում են: Փչած կերակուրը, վատ ներգործելով ստամոքսի վրայ, առաջ է բերում ցաւ:

Ատամներ չունեցող մարդիկ յաճախ մի տեսակ ճնշում են զգում կրծոսկրի տակ, փորները ցաւում

են և միշտ կապուտիչն են ունենում։

Այս բոլոր ասածներից դուրս է գալիս այն, որ լաւ սննունդ առնելու և առողջ լինելու համար պէտք է ունենալ լաւ ատամներ։ Մինչդեռ քիչ մարդ կըզտնւի, որ բերանում այնքան ատամներ ունենայ, որքան հարկաւոր է լաւ ծամելու համար։

Շատերը միայն ունենում են առաջի ատամները։ Յետևում կամ բոլորովին չեն ունենում, կամ ունենում են փշաձ ատամների արմատները։

Դրա պատճառն այն է, որ երբ ատամն սկսում է ցաւել, կամ խոկոյն հանել են տալիս, կամ թէ չէ թողնում են, մինչև որ ինքն իրան փշում և մանր-մանր կտորներով սկսում է թափւել։ Ատամի հետ այդպէս վարւելը մեծ անխոհեմութիւն է։ Ինչո՞ւ թողնենք ատամը զուր տեղը փչանայ, քանի որ հմուտ բժիշկը կարող է ցաւը թեթևացնել առանց հանելու։ Մինչև անգամ կարող է այնպէս բժշկել, որ առ միշտ դադարէ ցաւելուց և երբէք չըփթէ, միայն թէ իր ժամանակին դիմել։ Իւրաքանչիւր մարդու անհրաժեշտ է իմանալ ատամների կազմը և դասաւորութիւնը և այն, թէ ինչ և ինչ պատճառներից են փչանում և ցաւում ատամները։

### Մարդ քանի ատամներ ունի և ինչպէս են նրանք դասաւորւած

Չափահաս մարդու ատամների թիւը հասնում է 32-ի։ Նրանք դասաւորւած են երկու կարգով՝ վերին և ստորին ծնոտների վրայ։ Մենք զործ ենք ածում զանազան կերակուրներ, դրա համար էլ ունենք զանազան ատամներ։ Խնձորը, վարունգը, և սրանց նման բաները կարող ենք կծել՝ կտրելու փոխարէն։ Դրա համար մենք ունենք տափակ ատամներ, բարակ և սուր ծայրերով. նրանք մեր առաջատամներն են, որոնք կոչւում են կտրիչներ։ Միսը, ձուկը և այս տեսակի ուրիշ կերակրեղէնն արդէն կտրիչներով չենք կտրում։ Դրանց համար մենք ունենք հաստ սեպաձայր ատամներ, որոնք կոչւում են ժանիքներ։

Մեր կծած պատառը ծամելու, մանրացնելու, տրորելու համար ունենք բոլորովին առանձին հաստ-հաստ ատամներ, որոնք կոչւում են սեղանատամներ։

Ամեն մի ծնոտի վրայ լինում են 16 ատամներ։ Վերին և ստորին ծնոտների ատամները միևնոյն կարգովն են դասաւորւած։

Առաջից տեղաւորւած են կտրիչները. 4 վերևի և 4 ներքևի ծնոտների վրայ։ Կտրիչների այս և այն կողմերում դնւում են ժանիքները՝ թէ վերևում և թէ ներքևում։ Ժանիքներից յետոյ սկսում են սեղան ատամները։ Ժանիքներից յետոյ սկսում են սեղանատամները, իւրաքանչիւր կողմում, թէ ստորին և թէ վերին ծնոտի վրայ 5, 5։

Ամեն մի ատամ բաղկացած է երկու մասից, արմատից և պսակից։

Արմատը կոչւում է ատամի այն մասը, որ դնւում է ծնոտի մէջ, իսկ պսակը՝ այն մասը որ երևում է բերանում, լնդերից դուրս։

Ամեն մի ատամ ունի մի-մի պսակ, իսկ արմատները զանազան են։ Կտրիչները և ժանիքները ունեն մի-մի արմատ, վերին սեղանատամները՝ երկերկու արմատ, իսկ ստորին ծնոտի վրայ գտնւող սեղանատամները նոյնպէս երկերկու։ Ատամների պսակները դրսից ծածկւած են հաղճապակով, (эмаль) որի շնորհիւ և ատամներն ունենում են գեղեցիկ փայլ. իսկ նրանց արմատները ծածկւած են բարակ թաղանթով, որ կոչւում է ոսկրամաշկ (подкостница)։

Թարգ. Տիկ. Ութոյեան։

(Կըշարունակի)

---

## Առողջ սովորութիւնների դաստիարակութիւնը

(Կին-բժիշկ Պոկրովսկայա)

—

1. Առողջ սովորութիւնների օգուտը։ 2. Սնունդ և քուն։ 3. Մաքրասիրութիւն։ 4. Կազմւածքն ամրապնդելը և ֆիզիկական մարզութիւնը։ 5. Կարգապահութիւն, աշխատանք և խնայողութիւն։

—

Երեխայի աւելի լաւ ֆիզիկական զարգացման համար, կենդանական կերակրի կողմը պահելով հանդերձ, ես դրանով երբէք չեմ ուզում բացասել լաւ սննդելու հնարաւորութիւնը՝ գլխաւորապէս բուսական կերակուր գործադրելիս։ Եթէ երեխան սովորած է վերջինիս և լաւ է զարգանում, հազիւ թէ հարկաւոր է նրա սննդելու եղանակը փոխել։ Գուցէ որ և է պայմանների տակ, օրինակ ժառանգականաբար, նա ունի այնպիսի լաւ ստամոքս, որ առանց դժւարութեան կարող է բոյսերից քաղել սննդելու համար կարևոր չափի նիւթեր։ Լինում է նոյնպէս բնաձին ատելութիւն դէպի մի քանի կերակրանիւթեր, օրինակ՝ դէպի միսը։ Այդ դէպքում հարկադրել երեխային այդպիսի կերակրի գործածութիւնը, միմիայն վնաս կարող է առաջացնել։ Բայց ամենայն դէպս, եթէ ծնողները նկատեն, որ մեծ քանակով բուսական կերակուր գործածելուց նրանց երեխան լաւ չէ զարգանում, նրանք պէտք է փորձեն սովորեցնել նրան կենդանական կերակրների գործածութիւնը։ Այս դէպքում ծնողներին մեծ օգնութիւն կարող է տալ այն հանգամանքը, որ քաղցած երեխան պատրաստ է ամեն ինչ ուտելու։ Այս պատճառով արթնացնելով նրա ախորժակը ֆիզիկական մարզութիւններով, մենք բաւական ճիշտ կերպով կարող ենք նրան սովորեցնել կանոնաւորապէս կերակուր ընտրելու եղանակը։

Երբ մենք վարժեցնում ենք երեխային աւելի սնունդ

դարար կերակուր գործածելու, պէտք է զգուշանանք նրա ախորժակային զգացմունքները չափից աւելի զարգացնելուց։ Մեծանալուց յետոյ նա չըպէտք է Նմանի Թօգոլի Պեօտր Պետրովիչ Պետուխինին, որն պատրաստ էր իր ախորժակին և ստամոքսին ամեն ինչ զոհել։ Երեխաների կերակուրը պէտք է սննդարար, բայց հասարակ լինի։ Նրա մէջ ախորժակի հրմեմունքն բուիճէնիկ չպէտք է գտնուեն։ Քաղցրը կերակուրը և պտուղները բոլորովին բաւական են նրանց ախորժակի համար։ Պղպեղ, մանանեխ և այլն այստեղ բոլորովին աւելորդ են։ Նոյնը պէտք է ասել թէյի, սուրճի և այլ այդպիսի խմիչքների մասին։ Ինչ վերաբերում է գինուն, մենք կարծում ենք, որ նրան չըպէտք է տալ ոչ միայն երեխաներին, այլ և պատանիներին։ Ձափից աւելի ալկօհոլ գործածելու վնասն ամենքին յայտնի է։ Այս պատճառով լաւ է, որ երեխաները գինու համն անգամ չըճանաչեն։

Այն հարցը, թէ ամեն առանձին դէպքում, որքան կերակուր պէտք է տալ երեխային, լուծելու է փորձով։ Երեխան ուտելուց յետոյ պէտք է նրան կուշտ գցայ, ահա այն կանոնը, որ այս դէպքում պէտք է ի նկատի ունենալ։ Ուրեմն նրան պէտք է ազատութիւն տալ այնքան ուտել, որքան նա ուզում է։ Եթէ երեխան առողջ է և սովոր է որոշ ժամանակամիջոցներում կերակուր ընդունել և առհասարակ նա կանոնաւոր կեանք է վարում, այն ժամանակ այդպիսի պայմանների մէջ սնունդը բոլորովին լաւ կըլինի։

Փոքր երեխաների մէջ յաճախ երևում է չափից աւելի ուտելու նշան—զգուտոց, ոչ թէ այն պատճառով, որ նրանք միանգամից շատ են կերել, այլ անկարգ կերակրելուց։ Նրանց ստամոքսի մէջ դեռ հին կաթ է լինում մնացած և նորից կերակուր են տալիս։ Նոր կերակուրը չի տեղաւորւում այնտեղ և հնի հետ միասին ետ է գալիս։ Այստեղ երեխան չէ մեղաւոր, որ շատ է կերել, այլ ծիծ տողը։ Այդպիսի երևոյթի առաջն առնում է կանոնաւոր կերակուրները։

Անշուշտ կան երեխաներ, որոնք միանգամից չափից աւելի են ուտում։ Դա կախուած է ստամոքսը կարիքից աւելի լցնելու սովորութիւնից։ Այդպիսի սովորութիւնը ըստ մեծի մասին առաջանում է անկանոն կերպով կերակրելուց։ Երեխային դրանից ետ սովորեցնելու համար հարկաւոր է հետևել նրա կերած կերակրի չափին, պակասեցնելով հետզհետէ կերակուրը մինչև բնական չափը։ Այս դէպքում որ և իցէ ուղեցոյց ունենալու համար, մենք առաջ ենք բերում այստեղ սննդարան կերակրանիւթերի այն չափը, որ ստացել է Հասսէն, հետազօտելով փիզիքապես լաւ զարգացման տէր երեխաներին՝

| Հասակ | Սպիտակուց | Ճարպ | Ածխա. նիւթ. |
|---|---|---|---|
| | Գ ր ա մ ն ե ր ո վ | | |
| 2 —2½ | 44,6 | 32,3 | 177,8 |
| 3 —4 | 50,7 | 37,5 | 204,9 |
| 5 —6 | 65,8 | 60,0 | 177,2 |
| 8½—9 | 82,9 | 87,3 | 227,5 |
| 10½—11 | 86,5 | 113,3 | 256,3 |

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ երեխան կարող է մի օր շատ ուտել, մեւս օրը քիչ և կարիք չըկայ հարկադրել, որ նա ահա այսքան ուտէ։ Միայն ցանկալի է, որ մի որոշ ժամանակամիջոցում, օրինակ՝ մի շաբաթուայ ընթացքում նրա օրական կերած կերակրանիւթերի չափը բնականին հաւասարի։

Այս իսկ պատճառով այս աղիւսակը կարող է ուղեցոյց լինել սպիտակուցի, ճարպի և ածխային նիւթերի այն քանակութեանը, որ պէտք է գտնւի զանազան հասակի երեխաների կերակրի մէջ։

Շատ անգամ պատահում է լսել այն կարծիքը, թէ երեխայի կերակուրը պէտք է կոշտ ու ցամաք լինի, ըստ որում նրա կեանքի մէջ կարող են դէպքեր պատահել, որոնք կըհարկադրեն նրան այդպիսի կերակրով բաւականանալ։ Այն ժամանակ նա կարող է ուրեմն տուժել իր քնքոյշ սովորութեան պատճառով։ Բայց եթէ ներկայ հարցին այդ տեսակէտից նայենք, վերջի վերջոյ մարդկանց կըհարկաւորի առաջադիմութիւնից ձեռք վեր առնել և վերադառնալ նախնական սննդին՝ հում արմատեղի, ծառակեղև և հում միս ուտելուն։ Ո՞նչ գիտենք, գուցէ մի որ և է պատահար գրկէ մեզ հեշտամարս կերակրի բոլոր բարիքներից և մենք հարկադրուած լինինք ուտել այն, ինչ ուտում են վայրենիները։ Մեր վինուորի երկաթէ սլաշարը, այսինքն նրա կերակուրը պատերազմի ժամանակ բաղկացած է հաճարէ պաքսիմատից։ Շատ կարելի է, որ մեր սննդած երեխան գինուոր դառնայ և նրան հարկաւոր լինի պաքսիմաթ ուտել, բայց հազիւ թէ մեզանից մէկը խորհուրդ տայ ծնողաց, այդպիսի դէպքն ի նկատի առնելով, սովորեցնել իր երեխաներին հաճարէ պաքսիմաթ ուտել։ Փիզիոլոգները մեզ ցոյց են տալիս, թէ մի որ և է կերակրանիւթ ներկայացնում է ամենագործարամարս և վստահուրացնող կերակուր։ Այս պատճառով նրանով երեխային սննդել, նշանակում է գործարացնել նրան՝ հասակ առնել և բարգաւաճել սովորեցնել նրան ստամոքսը չափից աւելի լցնել, ծանրաբեռնելով անօգուտ նիւթերով։ Բոլոր պատահմունքները անհնար է նախագուշակել։

Մեզ անհմաստ բան է թւում երեխային կրթելիս գլխաւորապէս ի նկատի ունենալ այդ պատահմունքները։ Գուցէ նա երբէք չըննկնի անսովոր դրութեան մէջ, այն ինչ սովորական պայմանների տակ վնասակար է ապրել ամեն մարդու։ Ահա ինչու մենք պէտք է սովորեցնենք երեխային միջակ կարողութեան տէր մարդկանց սննդարարկերակրին։ Այդպիսի կերակուրը կըբաւականացնի նրա կազմածքի պահանջները։ Նրա ստամոքսը կը սովորի չափաւոր աշխատանքի, և դա ճնշող ազդեցութիւն չի ունենալ նրա հոգեկան գործունէութեան վրայ։

Նորածին եղեխայի կեանքն անցնում է ուտելու և քնելու մէջ։ Նա արթնանում է միայն, երբ նրան կերակրում են, լողացնում կամ սպիտակեղէնը փոխում։ Յետոյ նա հետզհետէ սկսում է արթուն մնալ։ Ահա այն ժամանակը, երբ նրան հարկաւոր է սովորեցնել կանոնաւոր քնի։ Պէտք է սկզբում հետևել, որ նա զբօսնէ առաւօտեան և երեկոյեան։ Այնուհետև նրա արթնութիւնը պէտք է աճի՝ քայլ առ քայլ ցերեկը քնելու հաշիւին։ Այս սովորութիւնը պէտք է պահպանել մինչև երկու-երեք տարեկան հասակը։ Այս հասակի անցնելուց յետոյ լաւ է վերջ տալ ցերեկուան քնին և սովորեցնել երեխային բաւականանալ միմիայն գիշերուան քնով։

Արդելելով երեխային ցերեկուան քունը, մենք պէտք է հոգանք, որ նա գիշերը բաւականաչափ քուն ունենայ։ Մատաղահաս երեխաներին հարկա որ է օրական

տասը ժամ քնել, աւելի հասակաւորներին իննը ժամ։

Փորձը մեզ ցոյց է տալիս, որ եթէ մենք ծնած օրից սովորեցնում ենք երեխային կանոնաւոր քնի, նա իւրացնում է նրան և մնչ աւելորդ ճանձրութիւն չէ պատճառում։ Կերակրի և քնի կանոնաւորութեան վերաբերմամբ աւելի լաւ է երեխաներին երբէք երես չըտալ։ Այժմ ամենալաւ ժամանակն է ստեղծել կանոնաւոր սովորութիւններ, ըստ որում մատղաշ երեխան իր կամքը չունի, այլ միայն մերը։ Առանձնապէս պէտք է աշխատել, որ նա սովորի դիշերը երկար և հանգիստ քնել։ Ինչքը բնութիւնը ցերեկւայ և դիշերւայ կանոնաւոր փոփոխականութիւնով մեզ ցոյց է տալիս, թէ վերջինը հանգստանալու ամենալաւ միջոցն է։ Ոչ մի բան այնքան չէ կարող վնասել երեխային որքան ցերեկը դիշեր դարձնել, իսկ դիշերը ցերեկ։

Այն խնդիրը, թէ ո՛ր ժամին պէտք է երեխան պառկի քնելու և տեղից վեր կենայ, մենք կարող ենք լուծել ի նկատի առնելով արեգակը։ Արեգակի լոյսը բարերչող ազդեցութիւն ունի ամեն մի կենդանու վրայ։ Նրա շնորհիւ բոլոր կենսական երևոյթները մեծ եռանդով են կատարւում։ Այս պատճառով երեխաներին արթուն մնալու համար՝ ցերեկն ամենաօգտաւէտ ժամանակն է։ Մենք պէտք է նրանց միջոց տանք կամ որքան հնարաւոր է աւելի լոյսով օգտւել։ Այդ նպատակին հասնելու համար ամենից լաւը կըլինի սովորեցնել երեխային ամառը տեղից վեր կենալ ժամը վեցին, իսկ ձմեռը եօթին, ութին։ Վաղ բարդնել առանձին կենդանութիւն և աշխոյժ է մեզ ազդում։ Ահա ինչու երեխաների համար աւելի օգտակար է վաղ վեր կենալ և պառկել, քան թէ հակառակը։

Երեխային քնեցնելիս՝ մենք երբէք չըպէտք է մեր թևերի կամ ահճակալի վրայ օրօրենք։ Օրօրելը վնաս է այն պատճառով, որ երեխայի գլուխը պտտեցնում է, իսկ դա վատ ազդեցութիւն ունի նրա առողջութեան վրայ։ Լաւ խազացած և առողջ երեխան շուտ կը քնի առանց օրօրելու և նանիկ ասելու։

Ջ.

## ՇԱՔԱՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՔՂՂՅՐԱՄԻԶՈՒԹԻՒՆ ԸՄՊՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲԹՇԿՈՒԹԻՒՆԸ

*Դր. Ռ. Շահմտրի*

### Քաղցրամիզութիւն։

Առողջ մարդու արեան և աւիշի մէջ միշտ շաքար (խազոդի) է պարունակւում, որի քանակութիւնը լինում է ոչ պակաս քան 0,1 և ոչ աւելի քան 0,15 տոկոս։ Որքան էլ մենք շատ կերակուր ընդունենք և ինչքան էլ մենք շաքարային նիւթեր ուտենք, մեր արեան մէջ շաքարի այդ քանակութիւնն անփոփոխ է մնում այնքան ժամանակ, քանի դեռ մարդ առողջ է։

Հարց. ո՞րտեղից է ստացւում շաքարը և ո՞ւր է գնում։

Նա ստացւում է գլխաւորապէս ուտելիքներից, մանաւանդ նրանցից, որոնք օսլայական բաղադրութիւն ունեն. դրանք են՝ հացը, կարտօֆիլը, կանաչեղէնը, խմորեղէնները և այլն։ Հենց որ կերակուրը մտնում է բերանը, նա իսկոյն ենթարկւում է թքի ազդեցութեանը, իսկ թուքն այն յատկութիւնն ունի, որ օսլան դարձնում է շաքար։ Յետոյ կերակուրն անցնում է ստամոքսը, որտեղ օսլայի շաքար դառնալը կանգ է առնում, շնորհիւ ստամոքսի մէջ եղած թըթւուտներին։ Այստեղից անցնելով աղիքների մէջ՝ կերակուրը ենթարկւում է փորադեզմի և ապիքների հիւթերի ազդեցութեանը։ Այդ հիւթերը իսկոյն մեծ ընդունակութիւն ունեն օսլան փոխելու շաքարի, որի կազմելը մարսողական խողովակի այդ մասում ակներև կերպով բաւականաչափ սաստկանում է։

Այստեղից շաքարն արդէն ծծւում է արեան մէջ, որտեղ նա գտնւում է վերոյիշեալ խիստ որոշ քանակութեան չափով։

Մեր կատարած ամեն մի աշխատանքը և այն տաքութիւնը, որ բղխում է մեր օրգանիզմից, առաջ են գալիս շաքարի դործադրութեան հետ միասին, այնպէս որ արիւնն անդադար վատնում է շաքար. իսկ քանի որ արեան մէջ եղած նրա քանակութիւնը մնում է անփոփոխ, ապա նա, ակներև է, որ պէտք է անդադար լրցւի։

Դա այդպէս էլ կատարւում է։ Որքան էլ մենք շաքար մտցնենք մեր օրգանիզմի մէջ, արեան մէջ ընկնում է նրա միայն մի որոշեալ քանակութիւնը։ Ռոլոր աւելորդը մասամբ փոխւում է ճարպի, իսկ մասամբ անցնում է լեարդի և մկանունքների մէջ, որտեղ նա հաւաքւում է ինչպէս գիկոգէնն, այսինքն ինչպէս մի նիւթ, որից ամեն րոպէ, երբ օրգանիզմը կարիք ունենայ, կարող է շաքար կազմւել։

Այսպէս ուրեմն լեարդն ու մկանունքները շաքարի պահեստի ամբարի դեր են կատարում։ Չէնց որ հասնում է այն րոպէն, երբ սատկացած աշխատանքի կամ առաջ եկած խիստ տարրութեան պատճառով, շաքարի քանակութիւնն արեան մէջ դածր աստիճանի է իջնում, իսկոյն օրգանիզմին օգնութեան են հասնում լեարդն ու մկանունքները։ Նրանց դիւկոզէնը փոխւում է շաքարի այնքան ժամանակ, մինչև որ օրգանիզմը ստանում է նրանից այնքան, որքան նրան հարկաւոր է իր աշխատանքը լրացնելու համար։

Ընդունած շաքարի մի խիստ աննշան քանակութիւն էլ արտաթորւում է մեզի հետ և, սակայն առողջ մարդու մօտ նրա հետքերը գտնել այնչափ դժւար է, որ շաքարի ամեն մի նկատելի երևումը պէտք է արդէն համարել անբնական երևոյթ։

Արանք են այն գործողութիւնները որոնք առաջ են գալիս կատարեալ առողջ օրգանիզմի մէջ բնական պայմաններում։

**Ն. Ezsur**

(Ջարունակելի)

## Բժշկական

Կիեւեմաօգրաֆը վերաբուժութեան մէջ։—Անկասկած է, որ շարժական լուսանկարչութեան գիւտը, որ այնքան չաջող գործադրում է առ այժմ զարմութեան և հաճոյքի համար, նւաճում է իրեն հաստատուն տեղ աւելի լուրջ գործերում և իր զար-

գացման չափով կը գտնայ միշտ աւելի ու աւելի անհրաժեշտ յաւելուած արուեստի, գիտութեան և մեքենայագիտութեան զանազան ճիւղերի մէջ։ Կինեմատոգրաֆիայի առաջին քայլերով այս ասպարէզում երևում է արդէն տարածել սկսող գործածութիւնը վիրաբուժութեան մէջ։

Առաջին անգամ 1897 թուին Ս. Դինբուրգում, բրիտանական բժշկական ընկերութեան նստին, մի վիրահատութեան կինեմատոգրաֆական պատկերացումը հակաճառութիւն գրտաւ։ Յետոյ տևեց մի անբողջ շարք նման հակաճառութիւնների Քեօլնի համալսարանում, բժիշկների միջազգային ժողովում Ամստերդամում, Լօնդոնի կնախատաբանական ընկերութեան մէջ և վերջին միջազգային ժողովում Փարիզում, բայց ոչ մի ժամանակ դեռ ևս այս կարևոր և մանաւանդ մասնագէտների համար գրնահատելի միջոցը չի գործադրել այնպիսի բազմակողմանի և լրիւ կերպով, ինչպէս ևս երևումս վերջացած նոյն բրիտանական բժշկական ընկերութեան ժողովում։

Հակաճառութիւնները ղեկավարում էր ինքը մասնագիտական կենդանի լուսանկարչութիւնների դիւտ անողը, փարիզցի հոչակաւոր բժիշկ-ուսուցապետ Դուապէն։ Ցոյց տուեցին նախ՝ կոյր աղիքի բորբոքման վիրահատութիւնները, որոնցով վերջին ժամանակներս առանձին ևռանդով են պարապում սկսած ուսուցչապետ Մեչնիկովից, և ապա՝ ուղիղ աղիքի, սրունքի և ոսկրածուծի բորբոքման վիրահատութիւնները։ Այս հակաճառութիւնները բոլոր ներկայ եղող բժիշկների վրայ այնպիսի տպաւորութիւն գործեցին, որ ամեայն հաւանականութեամբ կինեմատոգրաֆը շուտով կը լինի անհրաժեշտ գործիք բոլոր անդամահատական դահլիճների։ Այսպիսի ճիշտ լուսանկարչական պատկերահանութեան օգուտն ակներև է, որովհետև ոչ մի ուսանող և մինչև անգամ բժիշկ-վիրաբոյժ չի կարող այնպէս ճիշտ և որոշ ուսումնասիրել հասարակ նկարագրութեամբ, իրան անծանօթ վիրահատութեան մեքենայաշարժութիւնը, ինչպէս այս կենդանի պատկերներով, վիրահատութեան ամբողջ ընթացքի ճիշտ արտադրութիւններով։

—Ծխախոտի պատմութիւնը

—Անգլիացի Պէննն ընդարձակ նիւթի հիման վրայ գրել է նորերումս ծխախոտ ծխելու պատմութիւնը, որ հետաքրքրութիւն է ներկայացնում ոչ միայն ծխողնելի համար։ Հետաքրքրքիր է, որ արևելքի նախնական բնակիչները, որոնց մենք այժմ մեզ պատկերացնել չենք կարող առանց ղէյլանի, պարտական են ծխախոտի ներմուծութեամբ արևմուտքի բնակիչներին. «Հազար ու մի գիշերի» մէջ չկայ դեռ ևս ոչ մի յուշմունք ծխախոտի ծխելու վրայ։ Նա առաջին անգամ բերւեց Եւրոպա 1559 թ. մի Իսպանացու ձեռքով և սկզբում մշակւում էր միայն Իսպանիայում, հայց արդէն 1560 թ. Փորթուգալական դրան ֆրանսիական դեսպանը, Ժան Նիկօտ, այնպէս եռանդուն կերպով գովեց այս նորութիւնը իր հրամանատարուհու, Կատարինէ Մեդիչու առաջ, որ շուտով ծխախոտն արտահանեց Ֆրանսիա «նիկօտիններ» անունով։ Ծխախոտն ապա Անգլիա մտաւ։

Շատ տարի անցնելուց յետոյ Անգլիայում գտաւ իրան համար այնքան լայն գործածութիւն, որ Բրիտանիայի ոսկեդարում պետական եկամուտների տասներորդ մասը կախուած ունէր այս նիւթից։ XVII դարի կիսում ծխախոտի ծխելը հասաւ իր գագաթնակէտին. ծխում էին եկեղեցիներում, պարլամենտում, մի խօսքով ամեն տեղ, ծխում էին նոյն իսկ կանայք և աղջիկներ. մայրերն ուղարկում էին երեխաներին ուսումնարան ծխամորճներով և ծխախոտով, որովհետև ծխելու արհեստը մտնում էր ուսման դասընթացի ծաւալի մէջ։ Մօտաւորապէս այդ ժամանակում ծխախոտը ներս մտաւ և Ռուսաստան, որի մասին վկայում է XVII դարում այնպիսի գրքերի տարածումը, ինչպիսին է «Ասացւածք անպիտան չարիքի մասին, որ է ծխախոտը» և այլն։ XVIII դարում ծխախոտը նորից դուրս եկաւ գործածութիւնից. եղան մինչև անգամ շրջաններ, երբ ծխելը համարւում էր ամօթալի։ Սակայն այն ժամանակ գտնում էին մխիթարութիւն ծխախոտ ուտելու և հոտ առնելու մէջ։ Մեր ժամանակում սիգարներ ծխելու տարածւած սովորութիւնն իր սկիզբն առնում է Ղրիմի պատերազմից. գերմանական և ֆրանսիական սպաները իւրացրին նրան իրանց ամէիկ դաշնակիցներից և տարան իրանց հետ հայրենիք։

—Զգացմունքների զոյնը—Աչերի կապի ուսուցչապետ Պետս տարօրինակ փորձեր է անում մարդկանց շնչառութեան վրայ։ Նա պահում է շնչառութեան նստւածքները սառեցրած խողովակների մէջ, յետոյ ենթարկում է նստւածքը մանշուկային (եօգային) լուծւածքի ներգործութեանը։ Եթէ մարդը գտնում էր հոգու հանգիստ դրութեան մէջ, նստւածքը մնում է անգոյն. եթէ մարդը զրգռւած էր, նստւածքն ընդունում է կինամանագոյն գունախառնութիւն (оттѣнокъ)։ Եթէ ներշնչի այս կազմութիւնը (препаратъ) կինամոնագոյն գունախառնութեամբ ուրիշ անձնաւորութիւն, այն ժամանակ այս վիրջինն էլ է զրգռւում։ Մեծ ցաւ է պատճառում մոխրագոյն նստւածքը, ղղջումն—վարդագոյնը։ Տխուր կամ չար մտքերը տալիս են թունալի, յամենայն դէպս առողջութեան համար շատ վնասակար նրստւածք, այն ինչ ուրախ և բարի մտքերը տալիս են նստւածք, որ առաջացնում է սրսկումների ժամանակ վերին աստիճանի ոգևորիչ ներգործութիւն։ Ուսուցչատեսը գտաւ այսպիսով մինչև 40 բուժիչ և այդքան էլ վնասակար հոգեկան դրութեան նիւթեր։

## Այլ եւ այլ

—.o.—

**Աչերի հայելու յօրելեանը.**— Կէս դար առաջ գերմանացի գիտնական Գէլ'մգօլ'ցը գտաւ այս գործիքը (аппаратъ), ո տալիս է հնարաւորութիւն տեսնել աչքի ներսը։ Այս բարերար գիւտի յիսնամեայ յօբելեանը կատօնւի Գերմանիայում բոլոր բժշկական ընկերութիւնների և հիմնարկութիւնների ձեռքով։ Բերլինում Augenklinik der Charité (հէնց այսպէս է Ֆրանսերէն, թէև Բերլինում է) աչքերի կլինիկում ուսուցչապետ Գրեեֆը և նրա պաշտօնակիցները հաւաքեցին պատմական հաւաքածու գերմանական և անգլիական աչքի ապակիների, մօտ 120 հատ, սկզբնական հասարակ տեսակից սկսած մինչև վերջին կատարելագործւածը։ Այս հաւաքածուն ի ցոյց կը դրւի ձրիաբար նայելու համար։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
վաճառներին ընդունում են աչեն օր.
բացի կիրակի օրերից.
Առաւօտեան երբ
Ս. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. մի աղուժութեան, վաճառական (սիմֆիլիս) եւ միզասեռ. հ.
Կ. Մ. Զիկովսկի—9—10 ժ. աչքի, ներքին եւ ներդային հ.
Կ. Ի. Գզելիեւ—11—12 ժ. կանանց եւ երեխայոց հ.
Զ. Ի. Բաբաճանեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին եւ երեխայոց հ.
Երեկոեան երբ
Ն. Ն. Իոսեմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Զապաովսկի—6—7 ժ. նեարդային (էլէկտրաբուժութիւն). վէներ. և մորթու հ.
Փ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.
Ֆ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճար 50. կ. չքաւորները ձրի։ Հա մախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. Առաքիւսկի—տանը ժողկահասութեամբ, բժշկական մարմնամարզութեամբ դիմել 11—1 ժ.
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նաւասարդեան

Լոյս է տեսել
Պ. Պոշեանցի
«ՅՈՒՆՕՆ»
վիպակը
Վաճառւում է հեղինակի մօտ
Գինն է 1 րուբլի
ուսմարով առնողներին 20% զիջում
Անապարհածախսը գնողներից։
Պոշեանցի մօտ ծախւում են և իր հետևեալ աշխատութիւնները
Կառաւծային վէպ ք. տպ. 1 ր. 30 կոպ.
Ծեցեր „ 1 „ — —
Ընդէ „ 1 „ 20 „
Սկիզբն երկանց „ 1 „ 20 „
Ծուշիկներ „ 1 „ — —
Հասցէն՝ Թիֆլիս, Սերով Պրոշեանց, Голов. пр. д. № 20 Խ.

Լոյս տեսաւ
ԵՐԻՒՆՔ ԶԱՀԱԶԻՉԻ
Նոր-Նախիջեւանի Ս. Խաչ վանքը
(արտ. „Լուսոյ“ հանդիսից)
Գինն է 40 կոպեկ 6—5

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1902 ГОДЪ
НА ЕЖЕМѢСЯЧНЫЙ ЛИТЕРАТУРНО-ИСТОРИЧЕСКІЙ ЖУРНАЛЪ
„Вѣстникъ Иностранной Литературы“
Вступая въ ДВѢНАДЦАТЫЙ годъ своего изданія, „ВѢСТНИКЪ ИНОСТРАННОЙ ЛИТЕРАТУРЫ“ попрежному будетъ неуклонно преслѣдовать поставленную при его основаніи главную задачу—ОБЩЕДОСТУПНОЕ, РАЗНООБРАЗНОЕ, ЛИТЕРАТУРНО-ХУДОЖЕСТВЕННОЕ ЧТЕНІЕ, знакомя въ хорошихъ переводахъ съ лучшими какъ новѣйшими, такъ и классическими произведеніями иностранныхъ изящныхъ литературъ. Вмѣстѣ съ тѣмъ въ отдѣльныхъ статьяхъ и въ болѣе краткихъ очеркахъ и замѣткахъ, въ „Заграничной хроникѣ“—„ВѢСТНИКЪ“, внимательно слѣдя за иностранною жизнью во всѣхъ ея характерныхъ проявленіяхъ, будетъ сообщать ОБО ВСЕМЪ НОВОМЪ, ВЫДАЮЩЕМСЯ, ИНТЕРЕСНОМЪ въ заграничной ОБЩЕСТВЕННОЙ ЖИЗНИ, НАУКѢ, ЛИТЕРАТУРѢ И ИСКУСТВѢ.
Постепенно улучшаясь и увеличиваясь въ объемѣ, все болѣе расширяя свои рамки, давая въ 1898 и 1899 годахъ читателямъ по 5000 страницъ убористаго шрифта, а въ 1900 и 1901 гг.—до 6000 страницъ, „ВѢСТНИКЪ“ и въ наступающемъ ДВѢНАДЦАТОМЪ году своего существованія будетъ попрежнему неуклонно преслѣдовать поставленныя при его основаніи задачи и безъ промедленія знакомить читателей со всѣми выдающимися новинками, принадлежащими перу талантливѣйшихъ представителей иностранныхъ литературъ.
За послѣдныя три года (1899—1901) въ „Вѣстникѣ“, кромѣ цѣлаго ряда статей, очерковъ и стихотвореній, было помѣщено около ТРЕХСОТЪ романовъ, повѣсти, разсказовъ и драматическихъ произведеній.
*Поставивъ себѣ, между прочимъ, задачей распространеніе среди читающей публики иллюстрированныхъ классическихъ произведеній знаменитыхъ писателей, „Вѣстникъ“ и въ 1902 году не отступитъ отъ обычая предшествовавшихъ лѣтъ.*
По примѣру 1899 и 1900 г., подписчики и въ будущему году получатъ
ТРИ ИЛЛЮСТРИРОВАННЫХЪ ПРИЛОЖЕНІЯ,
изъ которыхъ одно будетъ разослано въ видѣ изящно изданнаго иллюстрированнаго тома, а два другихъ напечатаны въ „ВѢСТНИКѢ“ съ особою нумераціею страницъ. Отдѣльно разсылаемое приложеніе—новый полный переводъ ОБѢИХЪ ЧАСТЕЙ безсмертной драматической поэмы геніальнаго нѣмецкаго поэта Гете
„ФАУСТЪ“
со множествомъ иллюстрацій (копій съ гравюръ) Лиценъ-Майера и другихъ извѣстныхъ художниковъ. Роскошное нѣмецкое изданіе, изъ котораго будутъ заимствованы иллюстраціи къ „ФАУСТУ“, стоитъ болѣе 100 рублей. Къ переводу Гетевской поэмы будутъ присоединены: портретъ творца „Фауста“, очеркъ его жизни и литературной дѣятельности, легенда о шарлатанѣ-чернокнижникѣ XVI вѣка, получившая подъ первомъ геніальнаго писателя глубокій смыслъ и міровое значеніе, и характеристика всѣхъ существующихъ поэтическихъ и драматическихъ обработокъ сказанія о Фаустѣ (Христофора Марло, Лессинга, Николая Ленау, Пушкина и другихъ).
Съ январьской книжки 1902 года начнется въ „Вѣстникѣ“ печатаніе съ особой пагинаціей второго и третьяго иллюстрированныхъ приложеній.
ВТОРОЕ ИЛЛЮСТРИРОВАННОЕ ПРИЛОЖЕНІЕ
ПРИКЛЮЧЕНІЯ БАРОНА МЮНХГАУЗЕНА,
прославившагося краснобайствомъ и доходившаго съ своемъ лганьѣ до виртуозности, появятся полностью въ русскомъ переводѣ впервые. Копіи съ превосходныя иллюстрацій Гюстава Доре украсятъ текстъ произведенія, пользующагося за границею огромной популярностью.
ТРЕТЬЕ ИЛЛЮСТРИРОВАННОЕ ПРИЛОЖЕНІЕ
ЗНАМЕНИТЫЕ АКТЕРЫ И АКТРИСЫ
ВЪ ХАРАКТЕРИСТИКАХЪ, ВОСПОМИНАНІЯХЪ И АНЕКДОТАХЪ
познакомитъ читателей со множествомъ замѣчательныхъ сценическихъ дѣятелей какъ заграничныхъ, начиная съ XVII вѣка, такъ и русскихъ. Составленная на основаніи многочисленныхъ матеріаловъ и снабженная портретами, по возможности, всѣхъ театральныхъ знаменитостей, эта монографія явится первымъ въ своемъ родѣ опытомъ не только въ русской, но и въ иностранной литературѣ.
подписная цѣна на 1902 годъ остается прежняя:
безъ доставки и пересылки 4 РУБ. 50 КОП. | съ доставкою и пересылкою 5 РУБ.
Желающіе получить отдѣльное приложеніе „ФАУСТЪ“ въ изящномъ коленкоровомъ золотомъ тисненомъ переплетѣ приплачиваютъ 50 к.
*Гг. служащіе въ казенныхъ и частныхъ учрежденіяхъ пользуются разсрочкою за поручительствомъ ихъ. казначеевъ и лицъ, завѣдующихъ подпискою.*
ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ: въ С.-Петербургѣ—въ Конторѣ Редакціи, ГОСТИНЫЙ ДВОРЪ, Зеркальная линія, № 63, магазинъ ПАНТЕЛѢЕВА (прот. Пажескаго Корп.), въ МОСКВѢ—въ Конторѣ Н. Н. ПЕЧКОВСКОЙ, Петровскія линіи, а гг. иногородніе благоволятъ адресоваться въ редакцію, СПБ., Верейская ул. д. № 16, собств.
За редактора—издатель *П. Ѳ. Пантелѣевъ.*
Об. 6—6